ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/96

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից 28.12.2021թ. ներկայացված (29.12.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/96 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ջիարջի» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 28.12.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

« 1. Վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հայտարարել է ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/1 ծածկագրով գնանշման հարցման հրավեր, որին հայտ է ներկայացրել նաև «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն:

2021թ-ի դեկտեմբերի 9-ի հայտերի բացման N2 արձանագրությունով գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի հայտի հավելված 1.1-ում առկա են անհամապատասխանություններ և մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը մասնակցին անհամապատասխանությունների մասին ծանուցելու և շտկման համար:

Նիստը շարունակվել է 14.12.2021թ-ին, որտեղ արձանագրվում է, որ «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է համապատասխան շտկումները:

Նույն արձանագրության 2.3 կետով գնահատող հանձնաժողովը «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը միաձայն (կողմ՝ 4, դեմ 0) գնահատել է բավարար:

Կից ներկայացնում ենք N2 Արձանագրությունը:

Որից հետո, նույն արձանագրությունով, գնահատող հանձնաժողովը առաջնորդվելով այն փաստից, որ գնման գործընթացը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, որոշում է կայացնում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները «բավարար» գնահատված մասնակիցների հետ վարել միաժամանակյա բանակցություններ:

Բանակցություններին մասնակցել է նաև «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն, որից հետո 17.12.2021թ-ին կազմված և 2021-12-23 16:07:49-ին հրապարակած թիվ 3 արձանագրության 3-րդ կետով հանձնաժողովը մերժել է «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված և թիվ 2 արձանագրությունով բավարար գնահատված 12; 13; 70 և 74 չափաբաժինները՝

Բանակցությունների նիստին, մինչև բանակցությունների արդյունքների ամփոփումը, գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 02.05.2016թ-ի N 502-Ն որոշմամբ, ստուգել է յուրաքանչյուր չափաբաժնի համար ցածր գին առաջարկած մասնակիցների կողմից ներկայացված դեղերի առկայությունը ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում, որի արդյունքում արձանագրվել է 12; 13; 70 և 74 չափաբաժինների համար «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի Կողմից առաջարկված դեղերը ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում ընդգրկված չեն, այսինքն գրանցված չեն:

Բացի այդ գնահատող հանձնաժողովը ծանուցել է արձանագրությունում նշված մասնակիցներին, այդ թվում նաև «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ին ներկայացնել առաջարկվող դեղերի գրանցման հավաստագրերը, ինչի իրավունքը գնահատող հանձնաժողովը չունի:

2. Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

Իրավական հիմք 1

Համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 41-րդ և 42-րդ կետերի՝

41. Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

42. Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Նույն դրույթները ներառված են նաև պատվիրատուի հրավերում կետ 8.9 և 8.10:

Այսինքն, բոլոր ոչ գնային պայմաններին վերաբերով անհամապատասխանությունները պետք է արձանագրվել և շտկման պահանջ ներկայացվեն հայտերի բացման և գնահատման նիստով, ինչ պատվիրատուն ի սկզբանե արել է:

Շտկման արդյունքում գնահատող հանձնաժողովը միաձայն (կողմ՝ 4, դեմ՝ 0) «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել է բավարար, հետևաբար

գնահատող հանձնաժողովը՝ իրավունք չունի այլևս անդրադառնալ նույն կետին և մերժել մեր կողմից ներկայացված որոշ չափաբաժինները:

Բացի այդ, գնահատող հանձնաժողովը իրավունք չունի պահանջելու դեղի գրանցման հավաստագիրը, քանի որ դեղի գրանցման հավաստագիրը պատկանում է դեղի գրանցման իրավատիրոջը և հասանելի չի դեղի մեծածախ մատակարարներին»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել պատվիրատուին՝

1. չեղարկել 2021թ-ի դեկտեմբերի 17-ի իր թիվ 3 արձանագրությունը,
2. այն բոլոր չափաբաժինների մասով, որոնց համար նվազագույն գին է ներկայացրել «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն, «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ին համարել ընտրված մասնակից:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 10.01.2022թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. <u>«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 03.01.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 2022 թվականի կարիքների համար դեղորայքի ձեռք բերման նպատակով կազմակերպվել և 02.12.2021թ-ին հրապարակվել է «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով մրցույթը:

Մրցույթի հրավերում գնման առարկայի տեխնիկական բնութագրերը սահմանելիս առաջնորդվել ենք «Գնումների մասին» ՀՀ օրենքի, «Գնումների գործընթացների կազմակերպման» կարգի և «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եվ այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ Կառավարություն 2 մայիսի 2013 թվականի N 502-ն որոշման/ կից կցվում է/ դրույթներով:

ՀՀ Կառավարության 02.05.2013թ-ի N 502-ն որոշման հավելվածի 2-րդ կետի համաձայն «Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման մարմնի կողմից (այսուհետ՝ լիազոր մարմին) սահմանված՝ Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի ցանկում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) ընդգրկված դեղերը

ձեռք են բերվում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով: Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի ցանկը, դեղերի պետական գրանցամատյանը (ռեեստր) տեղադրված են լիազոր մարմնի պաշտոնական «www.moh.am» կայքում»: Այսինքն պետական բյուջեի միջոցների հաշվին ձեռք բերվող դեղերը պետք է լինեն գրանցված «Դեղերի պետական գրանցամատյանում»: Իսկ «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ն 100 տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություն է:

Մրցույթի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 09.12.2021թ-ին ժամը 16:00-ին ք. Կապան, Մ. Ստեփանյան 13 հասցեում: Մրցույթին հայտ է ներկայացրել 15 կազմակերպություն:

Հայտերի գնահատման ընթացքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

«ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի հայտի հավելված 1.1-ում «Ֆիրմային անվանումը», «ապրանքային նշանը» սյունակները լրացվել են թերություններով, մասնավորապես չի նշված առաջարկվող ապրանքի ֆիրմային նշանը, ապրանքային անվանումը, այլ լրացված է այնպես, ինչպես եղել է հրավերի տեքստում / կից կցվում է/:

Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով, մասնակցին ծանուցել անհամապատասխանությունների վերաբերյալ, առաջարկելով նրան շտկել այն: Ծանուցումը էլ. փոստի միջոցով ուղարկվել է մասնակցին 10.12.2021թ.-ին ժամը 12:29-ին /կից կցվում է էլ փոստից ներբեռնված ծանուցումը/:

«ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն էլ. փոստի միջոցով ուղարկել է իր կողմից շտկված հավելված 1.1-ը 14.12.2021թ-ին ժամը 02:09-ին /կից կցվում է էլ. փոստից ներբեռնված գրությունը/:

Հայտերի գնահատման նիստը շարունակվել է 14.12.2021թ-ին, որտեղ մասնակիցների, այդ թվում նաև «ՋԻԱՐՋԻ»ՍՊԸ-ի հայտ գնահատվել է «բավարար» և հիմք ընդունելով գնահատման արդյունքները և հաշվի առնելով, որ գնման գործընթացը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, ուստի հանձնաժողովը որոշել է, կարգի համաձայն բացման նիստը կասեցնել՝ գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման համար: Բանակցությունների նիստը հանձնաժողովը որոշել է անցկացնել 2021թ-ի դեկտեմբերի 17-ին ժամը 11:00-ին, ք.Կապան, Մ. Ստեփանյան 13 «Կապանի ԲԿ» ՓԲԸ հասցեում /հաշվապահություն/, մասնակիցներին ծանուցել բանակցությունների վայրի, ժամի և անցկացման կարգի վերաբերյալ:

Բանակցություններին էլեկտրոնային փոստի միջոցով գնային առաջարկներ են ներկայացրել «Տոնուս-Լես»ՍՊԸ-ն, «Ջիարջի»ՍՊԸ-ն, «ԼԵՅԿՈ»ՍՊԸ-ն, «Ռիխտեր-Լամբրոն»ՀՁ ՍՊԸ-ն, «Արֆարմացիա»ՓԲԸ-ն, «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ»ՓԲԸ-ն, «Թեոֆարմա Իմարրտ»ՍՊԸ-ն, «Մեդիկալ Հորիզոն»ՍՊԸ-ն և «Նատալի ֆարմ»ՍՊԸ-ն:

Բանակցությունների նիստին, մինչ բանակցությունների արդյունքների ամփոփումը, ի հայտ եկած նոր բացահայտված փաստերի, մասնակիցներից ստացված բանավոր բողոքների հիման վրա, գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Կառավարության 02.05.2016 թ-ի N 502-Ն որոշմամբ, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 67-րդ կետը՝ «Գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավատու մարմինների գրավոր եզրակացությունը. ..», ստուգել է առաջարկված դեղերի առկայությունը «Դեղերի պետական գրանցամատյանում» www.pharm.am կայք-էջի «Գրանցված դեղերի տեղեկատու» բաժնում, որի արդյունքում պարզվել է, որ

N 13 և 21 չափաբաժինների համար «Զայնա մոլ» ՍՊԸ-ի,

N 17 և 75 չափաբաժինների համար «Վագա ֆարմ» ՍՊԸ-ի,

N 12; 13; 70 և 74 չափաբաժինների համար «ՋԻԱՐՋԻ»ՍՊԸ-ի,

N 3; 12 և 27 չափաբաժինների համար «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված դեղերը գրանցված չեն «Դեղերի պետական գրանցամատյանում»: Հանձնաժողովը լրացուցիչ, սխալներից խուսափելու համար, ծանուցել է նշված մասնակիցներին, ներկայացնել առաջարկվող դեղերի գրանցման հավաստագրերը:

Սահմանված ժամկետում «Վագա ֆարմ» ՍՊԸ-ն ներկայացրել է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից տրամադրված ներմուծման հավաստագրերը, սակայն այն չի քննարկվել, քանի որ N 502-ն որոշման հավելվածի 2.3 կետի համաձայն «Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ կարող են ձեռք բերվել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 202-Ն որոշմամբ հաստատված կարգին համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության թույլտվության հիման վրա ներմուծված չգրանցված դեղեր՝ ներմուծման հավաստագրի առկայության դեպքում:», իսկ մրցույթի կազմակերպման ժամանակահատվածում Հայաստաի Հանրապետությունում Ռազմական կամ արտակարգ դրություն չի հայտարարվել:

Հիմք ընդունելով վերոգրայլը, գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել N 13 և 21 չափաբաժինների համար «Զայնա մոլ» ՍՊԸ-ի, N 17 և 75 չափաբաժինների համար «Վագա ֆարմ» ՍՊԸ-ի, N 12; 13; 70 և 74 չափաբաժինների համար «ՋԻԱՐՋԻ»ՍՊԸ-ի, N 3; 12 և 27 չափաբաժինների համար «Նատալի ֆարմ»ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը, քանի որ առաջարկվող դեղերը գրանցված չեն ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում, այդ թվում նաև N 12; 13; 70 և 74 չափաբաժինների համար «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի հայտ»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 10.01.2021թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2021/96 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2021/96 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Ջիարջի» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.12.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ջիարջի» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար:

3. Նույն արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով ոչ գնային պայմանները «բավարար» գնահատված մասնակիցների հետ 17.12.2021թ. ժամը 11:00-ին միաժամանակյա բանակցություններ վարելու և մասնակիցներին բանակցությունների վայրի, ժամի և անցկացման կարգի վերաբերյալ ծանուցելու վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ բանակցությունների նիստին, մինչ բանակցությունների արդյունքների ամփոփումը, գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 02.05.2016թ. N 502-Ն որոշմամբ, ստուգել է յուրաքանչյուր չափաբաժնի համար ցածր գին առաջարկած

մասնակիցների կողմից ներկայացված դեղերի առկայությունը ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում, որի արդյունքում արձանագրվել է, որ 12-րդ, 13-րդ, 70-րդ և 74-րդ չափաբաժինների մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից առաջարկված դեղերը ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում ընդգրկված չեն, այսինքն՝ գրանցված չեն և ծանուցել առաջարկվող դեղերի գրանցման հավաստագրերը ներկայացնելու վերաբերյալ:

5. Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Ջիարջի» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ, քանի որ առաջարկվող դեղերը գրանցված չեն ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ջիարջի» ՍՊԸ-ի 28.12.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 03.01.2021թ. գրությամբ հայտնած դիրքորոշումը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը

հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները):

(...)

Այսպես՝ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Ջիարջի» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.12.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ջիարջի» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար:

Նույն արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով ոչ գնային պայմանները «բավարար» գնահատված մասնակիցների հետ 17.12.2021թ. ժամը 11:00-ին միաժամանակյա

բանակցություններ վարելու և մասնակիցներին բանակցությունների վայրի, ժամի և անցկացման կարգի վերաբերյալ ծանուցելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ բանակցությունների նիստին, մինչ բանակցությունների արդյունքների ամփոփումը, գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 02.05.2016թ. N 502-Ն որոշմամբ, ստուգել է յուրաքանչյուր չափաբաժնի համար ցածր գին առաջարկած մասնակիցների կողմից ներկայացված դեղերի առկայությունը ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում, որի արդյունքում արձանագրվել է, որ 12-րդ, 13-րդ, 70-րդ և 74-րդ չափաբաժինների մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից առաջարկված դեղերը ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում ընդգրկված չեն, այսինքն՝ գրանցված չեն և ծանուցել առաջարկվող դեղերի գրանցման հավաստագրերը ներկայացնելու վերաբերյալ:

Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Ջիարջի» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ, քանի որ առաջարկվող դեղերը գրանցված չեն ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, ղեկավարվելով ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 17-րդ կետով, ՀՀ առողջապահության նախարարությանն ուղղված 29.12.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/21705-2021 գրությամբ խնդրել է հայտնել արդյո՞ք պետական մարմինների կողմից իրենց կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգերի շրջանակներում մասնակիցների կողմից առաջարկվող դեղորայքը պետք է գրանցված լինի դեղերի պետական գրանցամատյանում, այսինքն՝ պետք է ունենա դեղերի պետական գրանցման հավաստագիր, թե՞ ոչ:

ՀՀ առողջապահության նախարարությունն ի պատասխան վերը շարադրված գրության 05.01.2021թ. թիվ ՎԳ/22.2/243-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 2021 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/21705-2021 գրության՝ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Ջիարջի» ՍՊԸ-ի (հետայսու՝ Ընկերություն) կողմից 28.12.2021թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/96 բողոքի քննության վերաբերյալ հայտնում եմ, որ պետության կողմից ձեռք բերվող դեղերի

գնումների գործընթացը իրականացվում է հիմք ընդունելով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 526-Ն և 2013 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 502-Ն կառավարության որոշումները:

Տեղեկացնում եմ, որ համաձայն ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի թիվ 502-Ն որոշման 2-րդ կետի՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման մարմնի կողմից (այսուհետ՝ լիազոր մարմին) սահմանված՝ Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի ցանկում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) ընդգրկված դեղերը ձեռք են բերվում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով: Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի ցանկը, դեղերի պետական գրանցամատյանը (ռեեստր) տեղադրված են լիազոր մարմնի պաշտոնական «www.moh.am» կայքում»: Հետևաբար, ***մրցույթին ներկայացված դեղը պետք է ունենա պետական գրանցում, ուստի նաև գրանցման հավաստագիր, ընդգրկված լինի գրանցամատյանում: Նշեմ, որ գրանցման հավաստագրի ներկայացման պահանջ վերոնշյալ իրավական ակտով սահմանված չէ:***

Միաժամանակ, համաձայն վերոնշյալ որոշման 2-րդ կետի 2.1 ենթակետի նախատեսված են բացառություններ, մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության, Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Պրոֆ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն ՓԲԸ»՝ հակաուռուցքային դեղերի մասով, «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ՝ հակաուռուցքային դեղերի մասով կարիքների համար, հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, կարող են ձեռք բերվել պետության կարիքների համար լիազոր մարմնի հատուկ թույլտվությամբ կիրառվող չգրանցված դեղեր, որոնք գրանցված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված միջազգային մասնագիտական կազմակերպություն սահմանելու մասին» N 172-Ա որոշմամբ սահմանված միջազգային մասնագիտական կազմակերպության անդամ երկրում կամ ունեն

Հայաստանի Հանրապետության առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաորակավորում»:

Ինչպես նաև համաձայն վերոնշյալ որոշման 2-րդ կետի 2.2 ենթակետի՝ «Սույն հավելվածի 2.1-ին կետով նախատեսված դեղերի համար գնման ընթացակարգի հրավերով նախատեսվում է, որ մրցույթի արդյունքում առաջին տեղն զբաղեցրած մատակարարը որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի հետ միաժամանակ պարտավորվում է ներկայացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրված հավաստող տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված միջազգային մասնագիտական կազմակերպությունների անդամ երկրում գրանցված լինելու կամ Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաորակավորում ունենալու մասին»: Հիմք ընդունելով վերոգրյալը տեղեկացնում եմ, որ ՀՀ-ում չգրանցված դեղեր կարող են ձեռք բերել միայն ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի թիվ 502-Ն որոշման 2-րդ կետի, 2.1 ենթակետով հաստատված գերատեսչությունները և բժշկական կենտրոնները:

Միաժամանակ նշեմ, որ համաձայն վերոգրյալ որոշման 2.3 ենթակետի՝ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ կարող են ձեռք բերվել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 202-Ն որոշմամբ հաստատված կարգին համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության թույլտվության հիման վրա ներմուծված չգրանցված դեղեր՝ ներմուծման հավաստագրի առկայության դեպքում: Վերոգրյալ որոշման 2.3 ենթակետով սահմանված կարգավորումները գործում են ՀՀ-ում գործող բոլոր բժշկական հաստատությունների համար»:

Այսպիսով՝ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Նույն ենթակետի ա) պարբերության համաձայն՝ ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում

առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ:

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Այսպիսով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.12.2021թ. նիստի ընթացքում «Ջիարջի» ՍՊԸ-ի հայտը գնահատել է բավարար, այնուհետև 17.12.2021թ. ժամը 11:00-ին հրավիրել է միաժամանակյա բանակցություններ և միաժամանակյա բանակցությունների նիստի ընթացքում միայն, մինչ արդյունքների ամփոփումը, ստուգել է և արձանագրել, որ 12-րդ, 13-րդ, 70-րդ և 74-րդ չափաբաժինների մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից առաջարկված դեղերը ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում ընդգրկված չեն, այսինքն՝ գրանցված չեն և ծանուցել առաջարկվող դեղերի գրանցման հավաստագրերը ներկայացնելու վերաբերյալ, այնուհետև մերժել Ընկերության հայտը, քանի որ առաջարկվող դեղերը գրանցված չեն ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում:

Ելնելով վերոգրյալից՝ արձանագրում եմ, ***որ թեև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ են տրվել ընթացակարգային մի շարք խախտումներ, այն է՝ Ընկերության հայտը բավարար գնահատելուց հետո, հրավիրվել են միաժամանակյա բանակցություններ, որի ընթացքում միայն ստուգվել և արձանագրվել է Ընկերության կողմից առաջարկվող դեղերի ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում ընդգրկված չլինելու փաստը, ինչպես նաև Ընկերությանը ներկայացվել է գրանցման հավաստագրի ներկայացման պահանջ, մինչդեռ՝ ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի թիվ 502-Ն որոշմամբ նման պահանջ սահմանված չէ, այնուամենայնիվ՝ հարկ եմ համարում արձանագրել նաև այն հանգամանքը, որ Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից առաջարկված դեղերը ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի թիվ 502-Ն որոշմամբ սահմանված կարգով ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում ընդգրկված չեն, որպիսի փաստն Ընկերության կողմից ներկայացված բողոքով չի վիճարկվել, ուստի՝***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն Ընկերության հայտը մերժելով գործել է իրավաչափ:

Հետևաբար՝ գտնում եմ, որ «Ջիարջի» ՍՊԸ-ի 28.12.2021թ. բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից 28.12.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ